

յոյն վարպետներու քով՝ իր ձեռներէց արագագործութեամբ մեծ զարկ տուաւ Ֆնտըքլեանց հաւաքական գործերուն . իրենց Մանչէսդըրի գործերը կը վարէր ի սկզբան երկար ատեն յաջողապէս՝ Յակոբ Մըրմըրեան , որ 1865ի վերջերը գնացած հաստատուած էր ի Մանչէսդըր և ճամբորդած Իտալիա , Վիեննա , Օտեսա , Մոսկուա , Բարիզ ու Մարսիլիա : Ֆնտըքլեան եղբարք՝ իրարմէ շատ տարբեր խառնուածներու վիճակած՝ կրրցան 25-30 տարի յաջողապէս վարել իրենց հօրն հետ հիմնադրած մանիֆաթուրայի գործը , եղբարց միուն ներհակները՝ միւսին կշիռ հակառակներովը ներդաշնակ միջասահմանի մը մէջ պահելով գործին հանրական ուղղութիւնը , որուն անդիական թեւը կը գտնուէր մինչև 1880 Յակոբ Մըրմըրեանի ձեռք : Միջոց մը Նշան Հարենց ևս ընկերանալով իրենց մէկ բանուկ ճիւղին՝ կրրցան միասնաբար տարին մինչև 250000ի գործ տեսնել : Բայց Պետրոս Ֆընտըքլեանի կանխահաս վախճանն՝ ամփոփեց գործերու մեծութիւնն զգուշագոյն սահմանի մը մէջ , ինչպէս կարապետ Գարակէօզեանի վախճանն ամփոփած էր հարկաւորապէս Գարակէօզեանց գործերը :

Գարակէօզեանց տունն՝ այս վերջինին վաղամեռիկ անհետացումէն ետքը մանաւանդ՝ անոր կիրթ նախանձաւորութիւններով արդարեւ հաստատուած արդէն ամուր և փորձագէտ հիմերու վրայ՝ չկրրցաւ շարունակել գէթ պասմայի զուարթ և բանաստեղծական ճիւղին մէջ կարապետողն կարապետի յառաջդիմական լայն գիծերուն վրայ , այլ հետզհետէ ամփոփելով իր վաճառական ընթացքը՝ զօրացուց սեղանաւորական չոր ճիւղը միայն (որուն սկիզբէն ձեռնամուխ եղած էր Գրիգոր Գարակէօզեան) և կտակեց զայն՝ շատ բարեբաղդ պայմաններու մէջ՝ իր յաջորդ փառանգորդներուն Արշակ , Մին-